Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՉԱՐՇԱՐԱՆԱՑ ԵՒ ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊՆ ՏՈՆԻՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ էջմիածին, 28 մարտի, 2020 թ.)

«Աստծուց է զորությունն ու փառքն իմ,
Աստված է օգնականն իմ
եւ Աստծու վրա է հույսն իմ»:
(Սաղմ. 61:8)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր մեր հավատքի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի չարչարանքների եւ Խոր Վիրապ մուտքի հիշատակության օրն է: Այս առիթով Մայր Աթոռ Սուրբ էջմիածնում Սուրբ Գրիգոր Լուսավորչի սրբազան եւ սրբարար մասունքներից սփռվող օրհնության ներքո աղոթք վերառաքեցինք առ Ամենակալն Աստված՝ խնդրելով Տիրոջ ողորմություններն ու օրհնությունները աշխարհասփյուռ մեր ժողովրդին եւ համայն աշխարհին:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի վարքն ու չարչարանքները վկայում են նրա զորեղ հավատքի եւ առ Տերն աներկբա հույսի մասին: Բազում տառապանքների ու նեղությունների մեջ նա ամուր պահեց Աստծուն ապավինելու իր կամքը՝ աղոթելով սաղմոսերգուի բառերով. «Աստծուց է զորությունն ու փառքն իմ, Աստված է օգնականն իմ, եւ Աստծու վրա է հույսն իմ» (Սաղմ. 61:8): Արդարեւ, սիրելիներ, Լուսավորիչ Հայրապետի սխրանքի ուղին Քրիստոսասեր ազգիս համար դարձել է քաջալերող օրինակ աստվածապավինության, համբերատարության ու արիության՝ հատկանիշներ, որոնք կենսականորեն անհրաժեշտ են բոլոր ժամանակներում, մասնավորապես դժվարին այս օրերին, երբ մեր ժողովուրդը համայն մարդկության հետ միասին պայքարում է համավարակի հաղթահարման համար: Հայոց երկրորդ Լուսավորիչ Սուրբ Գրիգորի զորեղ հավատքով մեր ժողովուրդը արժանացավ Հարուցյալ Փրկչի լուսեղեն էջքին հայրենի հողում: Ազգովի հավատացինք Միակ ճշմարիտ Աստծուն, Նրա Միածին Որդուն եւ փրկչական առաքելությանը: Քրիստոսի հաղթական Հարության հույսին խարսխված կյանքը ճառագեց Հայոց աշխարհում, եւ հավատքը դարձավ մեր ժողովրդի համար կենսապարգեւ զորություն, որով կերտեցինք մեր

ոսկեդարը, մեր դպրության ու մշակույթի բարձր արժեքները, դիմակայեցինք պատմության արհավիրքներին, վերապրեցինք Հայոց ցեղասպանությունը եւ վերահաստատեցինք մեր անկախ պետականությունը։

Սիրելի զավակներ Մեր, այսօր մեր եւ աշխարհի կյանքը փոթորկած համավարակի փորձության մեջ նույնպես մեր հավատքի հայրը իր կյանքի օրինակով պատգամում է մեզ հուսալ առ Աստված, ընդունել Նրա զորությունը եւ հավատքը դարձնել կյանքի ճանապարհ։ Հիրավի, նա, ով հավատում եւ վստահում է Աստծուն, չի վախենում կամ տարուբերվում փորձության փոթորկահույզ ուժգին ալիքներից, եւ որպես ժայռի վրա հաստատված տուն, որը հնարավոր չէ կործանել, մնում է ամուր ու հաստատուն, քանզի նրա խարիսխը Աստծու հույսն է, ինչպես առաքյալն է ասում. «Մենք հաստատուն մխիթարություն ունենանք. մենք, որ ապաստան գտանք՝ կառչելու առաջիկա հույսից, որը հաստատուն եւ անշարժ խարիսխ է մեզ համար» (Եբր. 6։18—19)։

Սիրելիներ, աղոթական այս պահին ի դեմս համայն հայության, Մեր սրտում ունենալով նաեւ ապաքինման կարոտ Մեր զավակներին, խոնարհվեցինք Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքակիր Աջի առջեւ եւ հայրաբար օրհնեցինք ձեզ, որ զորանաք հավատով ու սիրով, գոտեպնդվեք հույսով, զինվեք համբերությամբ եւ փորձության այս օրերը դարձնեք հնարավորություն՝ առանձնության մեջ խորհելու կյանքի ու հոգեւոր արժեքների կարեւորության, միմյանց հանդեպ հոգատարության, մեր երկրի ու ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման եւ ապագայատեսիլ իրագործումների մասին։ Ստեղծված իրավիճակում մենք կոչված ենք խստագույնս հետեւելու պետական պատկան մարմինների ցուցումներին, առավելագույն սթափություն ու զգոնություն դրսեւորելու, որպեսզի պատճառ չդառնանք վարակի տարածման, չվտանգենք մեր, մեր հարազատների ու հայրենակիցների առողջությունը։

Այժմ հրավիրում ենք ձեր սրտաբուխ աղոթքով միանալու Մեր հայցին առ Աստված եւ խնդրելու Տիրոջ ամենախնամ հովանին ու պահպանությունը համայն աշխարհին եւ Մեր զավակներին՝ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո։ Եկեսցէ արքայութիւն Քո։ Եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի։ Զհաց մեր հանապազորդ

տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ։ Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն։

Պահպանիչ եւ հոյս հավատացյալների, Քրիստոս Աստված մեր, Քո բազմաչարչար վկայի եւ մեր հավատքի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի աղոթքներով եւ բարեխոսությամբ խաղաղության մեջ պահիր, պահպանիր եւ օրհնիր համայն աշխարհը, մեր երկիրն ու ժողովրդին՝ աշխարհականներին եւ հոգեւորականներին, մեծերին եւ փոքրերին, արանց եւ կանանց, եւ Քեզ ապավինող Քո բոլոր զավակներին Քո սուրբ եւ պատվական խաչի հովանու ներքո։

Քո անչափ բարերար կամքով նաեւ օրհնիր եւ զորություն պարգեւիր Հայաստանի Հանրապետության բոլոր պաշտոնյաներին՝ նախագահին, վարչապետին, խորհրդարանին, նախարարներին, հայրենյաց պաշտպան զորահրամանատարներին եւ զինվորներին, իրենց անձնվեր առաքելությունն իրականացնող մեր բժիշկներին ու բուժաշխատողներին, ոստիկաններին, եւ այս դժվարին հանգամանքներում իրենց ծառայությունը մատուցող բոլոր անձանց։

Օրհնիր եւ բժշկություն պարգեւիր վարակից ապաքինվողներին, տոկունություն ու արիություն շնորհիր մեկուսացվածներին, մխիթարություն պարգեւիր նեղյալներին ու սգացյալներին, այլեւ հանգստություն ու խաղաղություն՝ ի Քրիստոս ննջեցյալների հոգիներին։

Փրկի՛ր մեզ եւ ազատի՛ր երեւելի եւ աներեւույթ թշնամիներից եւ արժանի դարձրու գոհությամբ փառավորելու Քեզ, Հոր եւ Սուրբ Հոգու հետ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն։

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ